ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 169-Ա
« 19 » ՀՈՒՆԻՍԻ 2025Թ.

ՎԱՀԵ ԱՎԱԳՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2335 որոշմամբ հաստատված կարգի 3-րդ և 7-րդ կետերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. «ՀՀ Վայոց ձորի մարզի Վարդահովիտի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Վահե Ավագյանին 2025 թվականի հունիսի 19-ին գործուղել ք. Երևան, 2025 թվականի հունիսի 20-ին մասնակցելու ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում քննվող թիվ 62238524 քրեական վարույթով հարցաքննությանը:
2. Վահե Ավագյանի գործուղման հետ կապված ծախսերը (օրապահիկ, ճանապարհածախս և գիշերավարձ) կատարել «ՀՀ Վայոց ձորի մարզի Վարդահովիտի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ֆինանսական միջոցների հաշվին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված չափով և կարգով:
3. Վահե Ավագյանին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել հաշվետվություն՝ գործուղման հետ կապված ծախսերի և գործուղման ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Recoverable Signature

X

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

Ք.եղեգնաձոր